

ՆԻԻԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

Սոյն խորագրով այս անգամ հրատարակութեան ենք տալիս մի ժամանակագրութիւն, որը կազմում է Մայր Աթոռի միաբան Խաչիկ ծ. վարդապետի պատմական Դիւանի Ե. Ժողովածուի թիւ 41 և 43 ձեռագիրը՝ և Գ. Ժողովածուի թիւ 41 «խնդիր ուղղուած Վրաստանայ մինիստր Պետր Իվանիչ Կաւալիցկիէն Սարգիս արքեպ. Հ. Զալալեանից»<sup>1)</sup>.

Ժամանակագրութեան դժուար ընթեռնելի լինելու պատճառով մի քանի տեղեր տարակուսելի մնացին, որ և նշանակել ենք ? նշանով:

Անփոփոխ պահել ենք ուղղագրութիւնը և լեզուն. վերջինս բարբառագրական տեսակէտից կարևոր է իբրև 18-րդ դարու Ղարաբաղի խօսակցական լեզուի փոքրիկ նմուշ:

Ձեռագիրը կազմուած է երկու մասից I Ա—ԻԲ և II ԻԳ—Խ, որն ըստ ձեռագրի վրայ եղած մակագրութեան թարգմանուած է պարսկերէնից: II մասի վերջին յիշատակութիւնները հաւանօրէն յետոյ աւելացրուած են. այդ պատճառով դժուար է որոշել թէ բնագիրը, իբ յիշատակութեամբ է վերջացել, որպէսզի հնարաւորուէր ստուգիլ որոշելու ժամանակագրութեանս գրելու թուականը: Ա—ԻԲ պիտի դրած համարել ոչ առաջ քան 1778 թ. (terminus ad quem): II-ի ժամանակը դժուար է որոշել յաւելումների պատճառով:

1) Հրապարակօրէն չնորհակալութիւն եմ յայտնում գերաշնորհ Խաչիկ ծ. վարդապետին, որ ինձ Զուարթնոց աւերակներում յարմարութիւն-միջոց տալով, թոյլ տուեց ազատ կերպով օգտուելու իր հարուստ և թանգագին պատմական նիւթերից:

Ազգագրական ընկերութ. հրատարակած «նիւթեր հայ մելիքների պատմութեան» Ա. պրակի յառաջաբանում պ. Լ. Ե. ասում է. «զնահատելի է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանաւոր անջքերի մասին, սկսած 1721 թ. մինչև 1813 թ. որ արտագրուած է Գասպար քահանայի ձեռքով գրուած մի մաշտոցից, ինչպէս նաև այլ պատմական տեղեկութիւններ՝ Աղա Մահմադ խանի արշաւանքի, նրա սպանման և սրանից յետոյ Ղարաբաղում տիրած սուլի ժանտախտի, գաղթի մասին»։ Այս յիշատակութիւնը թոյլ է տալիս կարծելու, որ թերևս իմ ձեռքի տակ եղած այս ժամանակագրութիւնը պ. Ե. Լ. յիշատակածի մի երկրորդ օրինակն է, միայն որոշ տարբերութիւններով, որոնք առաջացած կլինեն զանազան պատճառներով և որոնց լուսաբանութիւնն սպառնալի զօրծ է գեւ. հարկաւ այս բոլորը համեմատութեամբ կիմացուի՝ երբ կհրատարակուեն բոլոր օրինակները։

Երկրորդ վաւերագիրը, որ ստորև ամբողջովին բերում ենք, ունի այս բովանդակութիւնը.

1781 թ. Գրիգոր Պատեովկինից և Յովսէփ «սքզն առաջնորդից» Ղարաբաղի մելիքները և Գանձասարի կաթողիկոսը թղթեր են ստանում, որով յայտնում են կայսերուհու զէպի նրանց ունեցած բարեհաճ տրամադրութիւնը։

Այդ թղթին պատասխանում են.

1782 թ. ստանում են նոր թուղթ—կրկին պատասխանում։ 1784 թ. Իբրահիմ խանն իմանում է այդ բանակցութիւնների մասին և սաստիկ պատժում. (մանրամասն տես թղթում) ապա պատմուած է մելիքների վրաստան զալը և Սարգիս եպիսկոպոսի խնդիրը։

Ա. Ե. Հախումխան

Էջմիածին.

Թարիխ. (ժամանակագրութիւն)

- Ա. Օսմայուն Իստանպուլ առաւ ՌՃԳ?
- Բ. Ավան ուզրաշին, որ եկաւ Շօշվայ քարն մտաւ սահիր խուրուջիլավ ՌՃԿԶ
- Գ. Օսմալու որ քարըն կալավ Ավան ուզրաշին վախավ քիւնայ . . . ՌՃՀԳ
- Դ. Սըրխօյն եկավ կանծայասարու երան ՌՃԶ
- Ե. Թանմազ դուլի խանըն որ է Նայտիր շահն Շամախի առաջ ՌՃԶԳ
- Զ. Թանմազ դուլին կանջայ կալավ ՌՃԶԵ
- Է. Իբրայնիմ խանը որ Նայտիրին եխար է Ջարուժըն ըսբանեցին ՌՃԶԸ
- Ը. Նայտիրըն յինտ ուետ տեռավ ՌՃՂԱ
- Թ. Նայտիրն որ ըսբանեցին ՌՃՂԷ ?
- Ժ. Ամիր ասլան խանըն կուտրեցին ՌՃՂԸ
- ԺԱ. Ալահ զուլի սոլթանըն որ չարայ բերթու ըսբանեցին ՌՃՂԹ
- ԺԲ. Վալին որ եկավ փանահխանըն փախավ ընցավ արասլըն ՌՄ
- ԺԳ. Հաջի չայաբին որ եկավ կանջայ կուրջուն կոխեց ՌՄԱ
- ԺԴ. Հաջի չայաբին եկավ Բայեայտին փանահխանի վերայ ՌՄԲ
- ԺԵ. Փանահ խանը, որ կիչանու կտրեց ՌՄԲ
- ԺԶ. Շօշվայ զալան, որ բինա գրին շինեցին ՌՄԳ
- ԺԷ. Մամատ Հասան խանըն եկավ Ղալին երայ ՌՄԶ
- ԺԸ. Աղաքիշին ըսբանեցին ՌՄԸ
- ԺԹ. Փաթալի խանըն ուրուկու որ եկավ Ղալէս երան ՌՄԹ
- Ի. Իբրահիմ խանը խան տեռավ ՌՄԺԲ
- ԻԱ. Փանահ խանը մեռավ ՌՄԺԳ (?)
- ԻԲ. Երիքայ Աշոն բերին (?) ՌՄԻԷ
- ԻԳ. Պիքայ աշուն Իբրահիմ խանըն պերաւ ՌՄԹԷ
- ԻԴ. Մեխիք Սային ըսբանեցին ՌՄԼ
- ԻԵ. Ղարարաղի զօշունըն Նազիկումն Գ՝Ռ մարթ փոնըվեց ՌՄԼ
- ԻԶ. Ջաւատ աղան բիթարալի եղաւ ՌՄԸԱ ?
- ԻԷ. Դարպանտու Փաթալի խան եկավ մինչի Աղղամն ՌՄԼԲ
- ԻԸ. Աղամամատ խանըն եկաւ կոլանպար եկ(տ) կնայ ՌՄԽԱ
- ԻԹ. Մեխիք Շահնազարը վախճանեցաւ ՌՄԽԳ.
- Լ. Աղա մամատ խանը եկաւ Շուշվայ զալին վերայ եկ կնայ Թիֆլիզ առաւ ՌՄԽԴ
- ԼԱ. Աղա մամազ խանըն եկաւ զալուս սպանեցին ՌՄԽԶ.

1. Բ. Խերցաւըն ընկաւ Շուշի զալան ՌՄԽԸ  
 1. Գ. Ուրուսըն Կանջայ առաւ զաթլամ արաւ յունուարի . . .  
 ումն էր ՌՄԾԳ  
 1. Դ. Իբրահիմ խանըն (4) կնաց Քուրուկչայի ուրուսին հետ  
 պարիչեց յունուարի ՌՄԾԴ  
 1. Ե. Շքեխտուրըն սարտար կնաց Պաքու ըսպանեցին փեար-  
 վար էր . . . ՌՄԾԵ  
 1. Զ. Մա՛ւատ Հասան աղան մարհում ելաւ յունւար էր ՌՄԾԵ  
 1. Է. Իբրահիմ խանըն զալիս ներքեմն զալի մայօրըն ըսպանել  
 տվեց ՌՄԾԵ.  
 1. Ը. Ալէքսանդր Պաւլովիչ ուրուսաց թագաւորը վախճանվեց . . .  
 ՌՄՀԵ  
 1. Թ. Ապաս միրզան որ զօշունաւն եկաւ Շուշվայ վրայ զալին  
 վրայ յունիս ամսին ՌՄ . . .  
 Խ. Ուրուսաց Նիկոլայ Պաւլովիչն որ օծեցին թագաւոր ՌՄՀԵ

ենդիր ի նորին վեհազնութեան Վրաստանայ Միեմիսը  
 Տ՛ն Պետր Իվանիչ Կաւալիցնիկեմ.

Ի թուին փրկչին մերոյ 1781-ին Տ՛ն Քնեազ Գրիգոր Պօտեմ-  
 կինէն և Տ՛ն Յովսէփայ սր՛չն առաջնորդէն ամենայն ուստայ  
 երկրի ազգին Հայոց, թուղթ եկն ի վ՛ր մկիբացն և ուզրաչոցն  
 Ղարաբաղու, որոյ միաք գրեցելոյն էր այս, ողորմութիւնն ամէն-  
 ողորմած կայսերունոյն հասեալ է ի վ՛ր ազգին Հայոց և մանաւանդ  
 ի վ՛ր Աղուանից մկիբացդ և ուզրաչոցդ և այն ըստ կարգի

Ի ժամանելն սոյն յուսադրական թղթոյն մելիք Աթամն մելիք  
 Խորայէլեան, մելիք Ապոմն մելիք Յովսէփեան և Դանիէլ ուզրաչին  
 մելիք Իէգեան որ էր եզրաբն իմ, միաբանն՝ լ ժողովեցան առ Յով-  
 հաննէս կթղկոսն Աղուանից, որնա եւ էր եզրայր մեր, զվերոյ թուա-  
 կանին Դեկտեմբեր ամսոյ մուսն ազատողական թուղթ մտուցին  
 իսպաս առ նորին կայսերական բարձրու՛թն, առ Քնեազ Գրիգոր  
 Պօտեմկինն առ Պաւլ Սէրգէիչ կողմնակալն, և առ Յովսէփ սր՛չ  
 առաջնորդն Հայոց, և ընկալան զպատասխանի ի 1782 թուին յու-  
 նիս ամսոյ ելն և յայսմիկ նուագող յուրիս ամսոյ 17-ին, յիշեալ  
 մելիք Աթամն մելիք Խորայէլեան փոխեցաւ առ Ա՛ժ, և ապա Յով-  
 հաննէս կթղկոսն, մելիք Մէջլումն մելիք Աթամեան, մելիք Ապոմն  
 մելիք Յովսէփեան, մելիք Բախտամն մելիք Արամեան և Դանիէլ  
 ուզրաչին մելիք Իէգեան վերստին թուղթ գրեցին և ձեռամբ Գար-  
 բէլ և Դանիէլ անուն մրդով մտուցին ի սպաս ամէն ողորմած կայ-  
 սերնոյն, զի զրութ՛քն չորիցս եղև ամենից պատասխան . . . ընկալան

ըստ իւր ժամանակին, որ թէ ի սոցանէ մատուցե՛լ թուղթքն և թէ ի նորին կայսերական բարձրու՞էն շնորհեցե՛լ թղթոց կողմայքն ի հարկէ լինելոց է պատրաստի ի գանձարանս թղւորին և ն նախաժողովքն յանձնեալ եղև մեզ ի յաթոսոջն Գանձասարու:

Իսկ ի թուին 1784-ին նոյեմբեր ամսոյ 5-ին Իրբէհիմ խորամանկ խանն տեղւոյն, գիտացե՛լ զայս խորհուրդ, սկսաւ հարցաքննութ, առնել զՅովհաննէս կիթղկոս եղբորէս, յիշեալ մելիքանց և ուզբաշիէն, և ապա զպարտաւորութ եղ ի վր կիթղկոսին, թէ այս քանս դու ես արարե՛լ վս ազգին հայոց որոյ յաղագաւ մշտպս մախայր ընդ կիթղկոսին և սպանայր մահացուցանել, մինչ զի մահագեղս տալով, երարձ զնա ի կենաց աստի, և յետ մահացուցանելոյն զնա ըմբռնեցին զիս և զեղբայրն իմ զԴանիէլ ուղբաշին և այլ երեք եղբայրքս, արկեալ ի բանտ 9 ամիս և 6 աւուր մնացաք ի բանտի Շուշվայ բերդին և զամ կահս սբյ Աթոռոյն Գանձասարու և զստացուածս եղբարցն իմոց, մինչև 5600 թումանի նաղդ և վէջ կողոպտեցին, նմանապէս և մելիք Բախտամին արարին, որ որդի նորին մելիք Արազն այժմ է ի Ղարաբաղ. անիրաւ խանն Իրբէհիմ զայս առաջադրէր մեզ թէ առուստաց տրութեանն թուղթ գրելոյ պտճառն դուք էք եղեալ:

Սորամանկ խանն այսու արարմամբք ոչ շատացաւ (կշտացաւ) զի զկաթղկոսութ, Գանձասարու, որ ազգին մեր էր վիճակեցե՛լ մինչ զի 33 կիթղկսք յազգէ մերմէ էին նստեալք, զայս ևս կողոպտեալ ի մէնջ և ևս այլոց, որ այժմ է ի Ղարաբաղ, նաև զմելիքութիւնն Առաջինցոյ որ ի Ղարաբաղ բնական մեր է եղեալ և ունեմք զվարման նատիր շահէն, զայն ևս երարց յազգէ մերմէ, և ևս ունեմն ծառայի մեր որ այս վերոյ գրեցեալ ա՞մ անցքն, պայազատ մելիք Արմշիդ մելիք Շահնազարեանն լաւապէս գիտէ:

Յորժամ այսքան վիշտ և նեղութիւնքն հասին մեզ, մելիք Մէջլումն, և մելիք Ապովն փախուստ առն՛լ զիմեցին այս կողմունս և նմանապէս և մեր զերծեալք ի մահուանէ ի փախուստ առն՛լ քանի վրդազօր և եղբայրներովս, եկինք ի քաղաքս առ որին արքայական բարձրութ Տ՞ն Գիօրգի արքայիս վրաց սպ՛սն. Ա՞ժ զընտերկայն աւուրս արասցէ ընկալաւ զմեզ սիրով և շնորհեաց մեզ ս՞ր վանքն Հաղբատու և հրամանաւն սրբազօր Հայրապետին ա՞մ Հայոց, որ ի հշմիածին առնեմք զեպիսկոպոսու՞թ և անդադ՞ր սղօթեմք, վասն կենաց, ամենաողորմած կայսերն, և թագաւրին մեր, և ձերոյ վեհազուրթեանն անցուցանեմք զառօրեայ կեանս մեր, բայց եղբայրքս և յիշեալ ուզբաշի Դանիէլ եղբօրս որդի Ա՞ժատուրն, կան աստ ողորմելաբար, զրկեալք ի բնական ժզլրդոց իւրեանց և յիշխանութնէ ակն ունելով արդար իրաւանց ձերոյ վեհազուրթ զի որով հետեի ի յամէն ողորմած նորին կայսերական բարձրութէ՞ս քեզ է յանձ-

նեցել՝ ակնարկումն Ղարաբաղու հնգից մելիքաց, ահա է օր և ժամանակ արդար իրաւանց. զի անցելումն զօրքն պարսից որք եկին ի վր երկրն յերևանու, ժողովրդքն Ղարաբաղու երկրին հնգից մելիքացն զորս կային անդ լսելով զբարի հռչակ անուն ձեր և գիտելով զչնորձաւոր գոն ձեր աստ և զմելիքներն իւրեանց աստի ծայրեթ ձեր ինքնայօժար կամօք, մինչև 330 տուն եկեալ են այս կողմունս ընդ հովանաւորութ ձեր՝ որ ի մէջ 25 մինչև 80 և կամ 90 տուն խաչնցիք մեր բնական ժողովրդոցն են որ հինգ մելիքաց մինն էր յազգէս է եղեալ, հայրն իմ և հօրեղբայրն իմ մինչև զուրմն մելիք նստեալ են զզլրաչից այամէն այս կողմն, որ այս բանիս զորպէսն Յովսէփ սրբզնաս<sup>1</sup>ը կթղոսն ամ Հայոց և պայապատ մելիք Ջիմիլոն մելիք Շահնազարեանն լաւապէս գիտակք են, որ և ինտրեմ մեծաւ աղերսանօք վերահասու լինիցի վեհազնութ. ձեր և թէ Խաչնու յերկրի մելիքութիւնն բնականապէս մեր ազգին իցէ, ք<sup>2</sup> ի խաչի սիրոյն արդար իրաւամբք շնորհնս վերստին զմելիքութիւն ուզբաչի Գանիէլ եղբօրս որդւոյն Ա<sup>3</sup> ծառուրիս որոց հայրն սպանեցել՝ ձեռամբ անիրաւ խանին և ինքն աստ ի ծառայութ ձեր է: Եւ նորակ կողովրդն մեր խաչնցիք շնորհա ամա ողորմութ. թղնելով, որ բացի նորակ խաչնցից աստ վրաց տուն և ի ծառայութ ամէն ողորմած ինքնակալ կարսերն և բոտ ժամանակին պիտոյանալ ձերոյ վեհազնութեանն:

Չայս ևս յուշ լիցի ձերոյ վեհազնութ զի մելիք Ջիմիլիդեան վարանդու է, մելիք Ապովն Թալիու մեր Խաչնու և երկուքն մինն է Գեանջայ Աղամն որդին մելիք Մէջլումին և մինն է Ղարաբաղ մելիք Աբազն որդին մելիք Բաղտամին և այս նորակ երևանայ Ղարաբաղու էլիցն է մելիքն էլ ժզվրդ կայ, ով որ տեղս են ամենին իւրեան ժողովրդն շնորհա և այնոքիկ որոց տեարքն ոչ են աստ, զայնս ում և պատչաճ համարեսցէ վեհազնութ ձեր նմա յանձնեա, յուսամք զի և նք եկացին ի ծառայութ ձեր և տիրեսցն ժողովրդոց իւրեանց, և թէ վեհազնութ ձեր արդար իրաւամբք այսպէս անօրինեսցէ ընկալնւոցէ զմեզ վարձս Ա<sup>4</sup> ծյ և զջովաթիս ի մարդկանէ և տեղս եղելոց տարածայնութիւնն ևս բարձել լինիլոցէ գրեցաւ զխնդիրս աղերսանաց 1800 թուին:

Մնամ ձերոյ վեհազնութ աղօթարար Սարգիս արեւայակպս Գանձասարայ Խ այժմ առաջնոց գերահռչակ սբ վանիցն Հախալասու<sup>1</sup>):

1) Սարգիս արքեպիսկոպոսը († 1828) Գանձասարի վերջին կաթուղիկոսն է (1810—1815) որից յետոյ այդ կոչումը փոխարինում է միտրապոլիտոսեանքը:

Սրան յաջորդում է Բաղդասար միտրապոլիտը, որով միանգամայն վերանում է Գանձասարի իշխանութիւնը: